ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՍԿ-ԳՀԾՁԲ-18/06 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍՏԵՂԾՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «07» մարտի 2018թ.

ժամը՝ 09:15

2018թ-ի մարտի 7-ին ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 49/9 հասցեում, տեղի ունեցավ ՀՍԿ-ԳՀԾՁԲ-18/06 ծածկագրով գնանշման հարցումով գնում կատարելու համար ստեղծված գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) հայտերի բացման նիստը (այսուհետ՝ նիստ): Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Լ. Գինոսյան	«Հայրենիք-Սփյուռք Կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրենի ժամանակավոր պաշտոնակատար – նախագահ
Գ.Սիմոնյան	«Հայրենիք-Սփյուռք Կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ – անդամ
Լ. Պողոսյան	«Հայրենիք-Սփյուռք Կենտրոն» ՊՈԱԿ-ի Կրթամշակութային ծրագրերի իրականացման բաժնի առաջին կարգի մասնագետ - անդամ

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Ա. Սիմոնյան	«Հայրենիք-Սփյուռք Կենտրոն» ՊՈԱԿ-ի գնումների գործընթացի մասնագետ

Նիստին ներկա էին նաև՝

«Մոդդ Իվենց» ՍՊԸ-ի տնօրեն՝ Արմենուհի Հարությունյան

«Բրուս» ՍՊԸ-ի կողմից լիազորված անձ՝ Սամվել Ադյան

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լիլիթ Գինոսյանը, իսկ քարտուղարն էր՝ Աննա Սիմոնյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. *ՀՍԿ-ԳՀԾՁԲ-18/06* ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց (այսուհետ՝ մասնակիցներ) մասին:

2. *ՀՍԿ-ԳՀԾՁԲ-18/06* ծածկագրով գնանշման հարցման մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատման մասին:

3. *ՀՍԿ-ԳՀԾՁԲ-18/06* ծածկագրով գնանշման հարցման առաջին և երկրորդ տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարելու մասին:

4.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1-ԻՆ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հանձնաժողովի քարտուղար Աննա Սիմոնյանը հանձնաժողովին հայտնեց, որ *ՀՍԿ-ԳՀԾՁԲ-18/06* գնանշման հարցմանը մասնակցելու հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում	Մասնակցի գտնվելու վայրը
1	«Բրուս» ՍՊԸ	Ք. Նոր Հաճն, Գետամեջի խաչ.
2	«Լամեքս» ՍՊԸ	ք. Արմավիր, Երևանյան 4/15
3	«Մոդդ Իվենց» ՍՊԸ	ք.Երևան, Չարենցի 70/8

Որոշվեց՝

1. Աննա Սիմոնյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

2-ՐԴ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հանձնաժողովը արձանագրեց, որ՝

1) Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված և ներկայացված են *ՀՍԿ-ԳՀԾՁԲ-18/06* գնանշման հարցման հրավերով (այսուհետ՝ հրավեր) սահմանված կարգով.

«Բրուս» ՍՊԸ-ի և «Մոդդ Իվենց» ՍՊԸ կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, «Լամեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում բացակայում է Հավելված 2-ը:

ՀՍԿ-ԳՀԾՁԲ-18/06 գնանշման հարցման հրավերի 1-ին մասի 8.8 ենթակետի համաձայն մեկ աշխատանքային օրով կասեցվել է նիստը: Նույն օրը տեղեկացվել է «Լամեքս» ՍՊԸ-ին, որպեսզի վերջինս մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկի անհամապատասխանությունը:

«Լամեքս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է Հավելված N2-ը:

2) «Բրուս» ՍՊԸ-ի և «Լամեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, իսկ «Մոդդ Իվենց » ՍՊԸ-ի

կողմից ներկայացված Հավելված N4-ը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ Գնային առաջարկը ներկայացված է առանց տառերի:

Որոշվեց՝

1. «Բրուս» ՍՊԸ-ի և «Լամեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար
2. «Մոդդ Իվենց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ ոչ բավարար, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

3-ՐԴ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակիցները ներկայացրել են հետևյալ գները.

Հ/Հ	Ծառայության անվանում	Մասնակիների անվանումը և առաջարկած գները /ՀՀ դրամ/						Ծառայության ծեռքբերման նախահաշվային գին/ՀՀ դրամ/
		«Բրուս» ՍՊԸ		«Լամեքս» ՍՊԸ		«Մոդդ Իվենց» ՍՊԸ		
		Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	Ընդհանուր գին	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	Ընդհանուր գին	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	Առաջարկված ընդհանուր գին	
1	**«Տարածքային համագործակցության և համահայկական մշակութային ծրագրերի իրականացում» ծրագրով նախատեսված փառատոնի կազմակերպում**	19000000	19000000	18489000	18489000	34012440	40814928	18685000

Որոշվեց

1. Որպես ՀՍԿ-ԳՀԾՁԲ-18/06 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել N1 չափաբաժնի մասով «Լամեքս» ՍՊԸ-ին:

2. Առաջարկել հանձնաժողովի քարտուղար Աննա Սիմոնյանին էլեկտրոնային փոստի միջոցով

2.1 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների ինչպես նաև հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

2.2 Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ *ՀՍԿ-ԳՀԾՁԲ-18/06* ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

4-ՐԴ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել ժամը 11:30, ք. Երևան, Հանրապետության 49, բն 9 հասցեում, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից համապատասխան եզրակացության ստացմանը հաջորդող աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան 2018թ. մարտի 17-ը:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Լ. Գինոսյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Գ. Սիմոնյան _____

Լ. Պողոսյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Սիմոնյան _____